դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	12500 /տասներկու հազար հինգ հարյուր/
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	50500 /հիսուն հազար հինգ հարյուր/
10.	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝	175 /մեկ հարյուր յոթանասուն հինգ /
11.	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
1)	Առևտրի օբյեկտների համար	25000 /քսանհինգ հազար/
2)	Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	50000 /հիսուն հազար/
3)	Բաղնիքների /սաունաների/ համար	250000 /երկու հարյուր հիսուն հազար/
4)	Խաղատների համար	500000 /հինգ հարյուր հազար/
5)	Շահումով խաղերի համար	250000 /երկու հարյուր հիսուն հազար/

6)	Վիճակախաղերի համար	75000 /յոթանասունհինգ հազար/
12.	Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝	
1)	Հիմնական շինությունների ներսում՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2500 /երկու հազար հինգ հարյուր/
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	5000 /հինգ հազար/
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	7500 /յոթ հազար հինգ հարյուր/
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	10000 /տաս հազար/
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	15000 /տասնհինգ հազար/
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	25000 /քսանհինգ հազար/
2)	Ոչ հիմնական շինությունների ներսում՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	500 /հինգ հարյուր/
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1000 /հազար/
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2000 /երկու հազար/
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4000 /չորս հազար/
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	7500 /յոթ հազար հինգ հարյուր/
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	12500 /տասներկու հազար հինգ հարյուր/
13.	Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	--

1)	Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	1000 /մեկ հազար/
2)	Թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	1750 /մեկ հազար յոթ հարյուր հիսուն/
3)	Սոցիալական գովազդի համար	0 դրամ
4)	Այլ արտաքին գովազդի համար	750 /յոթ հարյուր հիսուն/
5)	Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված սահմանված տուրքի 25%-ի չափով	188 /մեկ հարյուր ութսունութ/
6)	Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.	75 /յոթանասունհինգ/
14.	Ֆիզիկական անձանց համայնքի խորհրդանիշը /զինանշանը, անվանումը/, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն	100000 /մեկ հարյուր հազար/
15.	Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝	10000 /տաս հազար/
16.	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	250000 /երկու հարյուր հիսուն հազար/
17.	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	--
1)	3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	1250000/մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/
2)	5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/
3)	7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	3500000 /երեք միլիոն հինգ հարյուր հազար/
4)	10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝	5000000 /հինգ միլիոն/

18.	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝	
1)	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հետապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար	20000 /քսան հազար/
2)	Հետապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝	150000 /մեկ հարյուր հիսուն հազար/
19.	Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային /մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ/ և ձմեռային /նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ/ սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝	5000 /հինգ հազար/

Հ/Հ	Տեղական վճարների անվանումը	Սահմանված դրույքաչափեր ^Ե /ՀՀ դրամ/
1.	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Մինչև 100-500 քմ Մինչև 500-1000 քմ 1000 քմ և ավելի	5000 10000 15000
2.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Մինչև 100-500 քմ Մինչև 500-1000 քմ 1000 քմ և ավելի	5000 10000 15000

3.	Ճարտարապետաշինարարական նախագծային Փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց Փոխհատուցման վճար՝ մինչև 500 քմ 500-1000 քմ 1000 քմ և ավելի	5000 10000 15000
4.	Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ Փաստաթղթերի /Փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց Փոխհատուցման վճար՝ մինչև 1000 քմ 1000 քմ և ավելի	3000 5000
5.	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝	5000
6.	Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց Փոխհատուցման վճար՝	3000
7.	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքներ կազմակերպելու համար աղբահանության վճար՝	
1)	Բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակիչ համար՝ ամսական՝	100
2)	Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում աղբահանության վճարը՝ ըստ շինության ընդհանուր մակերեսի՝	
ա.	Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	70
բ.	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների /ավտոկայանների, երկաթուղային կայարանների/, հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	30
գ.	Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	20
դ.	Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և	5

	շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	
	իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	8
ե.	Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով /այդ թվում՝ ավտոկայանատեղի/ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	10
զ.	Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 7-րդ կետի 2) ենթակետի ա, բ, գ, դ, ե ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7-րդ կետի 2) ենթակետի ա, բ, գ, դ, ե ենթակետերով սահմանված դրույքաչափերով.	
է.	Շինություններում /այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում/, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7-րդ կետի 2) ենթակետի ա, բ, գ, դ, ե ենթակետերով սահմանված դրույքաչափերով.	
3)	Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	50
4)	Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին.	
5)	Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ 7-րդ կետի 2) ենթակետի ա, բ, գ, դ, ե ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը	
ա.	Ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝	3000
բ.	Ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար	10000

9.	Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրական շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանվում է 1 խմ աղբի համար՝ մեկ տոննա աղբի համար՝	200 500
8.	Ջրմուղ-կոյուղու համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց՝ փոխհատուցման վճար՝ Ջրամատակարարման համար՝ 1 խմ Եթե ջրաչափ տեղադրված չէ յուրաքանչյուր տնտեսության համար՝ Ջրահեռացման համար տունը տարեկան	50 դրամ 500 2000 դրամ
9.	Ոռոգման ջրի մատակարարման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց Փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի, օգտվող յուրաքանչյուր տնտեսության համար սահմանել ամսական	500
10.	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց Փոխհատուցման վճարի չափով սեփականաշնորհված բնակարանների 1 քմ-ի համար ամսական	10
11.	Համայնքային ենթակայության նախադպրոցական կազմակերպությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	3000
12.	Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական, արվեստի դպրոցներ և այլն)՝ ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց Փոխհատուցման վճար սահմանել՝	3000
13.	Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց Փոխհատուցման վճար սահմանել՝	10000

14.	Համայնքի սեփականություն հանդիսացող պատմության և մշակութային անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց Փոխհատուցման վճար սահմանել՝	0
15.	Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից Փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝մեկ Փաստաթղթի համար Փոխհատուցման վճար՝	500
16.	Համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար՝	
1)	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվության համար	500
2)	Ծննդոգնության թեթև միջամտության համար	1000
3)	Ծննդոգնության ծանր միջամտության համար	3000
4)	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների ինունականխարգելիչ պատվաստումներ և արյուառում կամ այլ նմուշառում՝կախված կենդանու տեսակից /բացառությամբ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների՝	
ա.	Մանր կենդանիների համար	100
բ.	Խոշոր կենդանիների համար	200
5)	Կենդանիների արտաքին և ներքին մակարոյծերի դեմ պայքարի համար	400
6)	Ախտահանություն՝մեկ քառակուսի մետրի համար	100
7)	Միջատազերծում /դիզինսեկցիա/՝մեկ քառակուսի մետրի համար	100
8)	Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ մեկ քառակուսի մետրի համար	200/
9)	Արհեստական սերմնավորման համար	5000
10)	Մանր կենդանու հերժման համար	1000
11)	Խոշոր կենդանու հերժման համար	3000
12)	Կենդանու բուժում՝կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից, յուրաքանչյուր այցելության համար	1000
13)	Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	
ա.	Մանր կենդանիներ՝	1000
բ.	Խոշոր կենդանիներ	2000
14)	Կենդանիների հետսպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	
ա.	Մանր կենդանիներ՝	1000
բ.	Խոշոր կենդանիներ	2000
17.	Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց Փոխհատուցման վճար՝	3000
19.	Համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց Փոխհատուցման վճար՝	0

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՅԱՄԱՅՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՉԻՅՈՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 03-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 30-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 05-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» թիվ 30-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Տեղական տուրքերի աղյուսակի 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար

2. տեղական վճարների աղյուսակի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «գ», « է» պարբերություններում և 5-րդ ենթակետում «7.21-7.2.5 ենթակետ» բառակապակցությունը փոխարինել «7-րդ կետի 2) ենթակետի ա,բ,գ,դ,ե ենթակետ» բառակապակցությամբ:

3. հանել տեղեկան վճարների աղյուսակի 18-րդ կետը, ուղղորդվելով « Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին 2023 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-263-Ն օրենքի 1-ին հոդվածով:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԲԼՈՒՏԻՆՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՆՈՎԻԿՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՌՈՒԴՈՄՅՈՏՈՏԿԻՆ ԱԼԵՔՍԵՅ

ՌՈՒԴՈՄՅՈՏՈՏԿԻՆ ՄԻԽԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիլիետովո համայնք

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2016 թվականի հունիսի 02-ի թիվ 631-Ն որոշմամբ՝ Ֆիլիետովո համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիլիետովո համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Նովիկովա Տատյանա, համայնքի ղեկավարի տեղակալ

Նախագահի տեղակալ՝ Արարատ Աբրահամյան, աշխատակազմի քարտուղար

քարտուղար՝ Նովիկովա Վալենտինա, համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ

անդամներ՝ Բլոխինով Ալեքսանդր, ավագանու անդամ

Ղազարյան Արամ՝ Ֆիլիետովոյի դպրոցի տնօրեն

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԲԼՈՒՄԻՆՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՆՈՎԻԿՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ ԱԼԵՔՍԵՅ

ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ ՄԻԽԱԻԼ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 05

«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ
ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով e-community հարթակով ստացված ծանուցումը առ այն, որ Հայաստանի Հանրապետության կողմից «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին որոշակի ժամկետով կոնցեսիոն կառավարման (օգտագործման իրավունքով) հանձնված անշարժ գույքերի հարկերը զրոյացնելու համար անհրաժեշտ է սահմանել արտոնություն և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

1. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին անշարժ գույքի հարկի գծով սահմանել արտոնություն՝ ազատելով հաշվարկված անշարժ գույքի հարկից՝ 52200 (հիսուներկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով և դրա նկատմամբ հաշվարկված տույժերից՝ 6291 (վեց հազար երկու հարյուր ինսունմեկ) ՀՀ դրամի չափով, ընդամենը՝ 58491 (հիսունույթ հազար չորս հարյուր ինսունմեկ) ՀՀ դրամ անշարժ գույքի հարկից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԲԼՈՒԽԻՆՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՆՈՎԻԿՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ ԱԼԵՔՍԵՅ

ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ ՄԻԽԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱԼԵՔՍԵՅ ԶԻՉՅՈՎ

ՀՀ Լոռու մարզի Ֆիզիկատուրիզմի համայնքի
Ավագանու 2025թ. հունվարի 20-ի
թիվ 06-Լ որոշման
Համայնքի ղեկավար՝



Ա. ԶԻԶՅՈՎ

Կազմված է 20.01.2025թ.
Բաղկացած է 6 թերթից
Տպագրված է 2 օրինակ
Օրինակ 1

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐԻ ՄԱՐԶԻ
ՖԻՆԼԵՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

2025թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԿԱՐԳԻ ՖԻՈԼԵՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովոյի համայնքի (այսուհետ՝ համայնք) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովոյի համայնքապետարանի Աշխատակազմ»-ը (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը օրենքով ու Ֆիոլետովոյի համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ավագանին կազմակերպում են իրենց գործունեությունը:

2. Աշխատակազմն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

4. Աշխատակազմի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովոյի համայնքապետարանի Աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ,

2) հայերեն կրճատ՝ «Ֆիոլետովոյի համայնքապետարանի Աշխատակազմ» ՀԿՀ,

3) ռուսերեն լրիվ՝ “Аппарат муниципалитета общины Фиолетово Лорийцкой области Республики Армения, муниципальное административное учреждение,

4) ռուսերեն կրճատ՝ “Аппарат муниципалитета Фиолетово” МАУ,

5) անգլերեն լրիվ՝ “The Staff of Fioletovo’s municipality of Lori region of the Republic of Armenia” community administration office,

6) անգլերեն կրճատ՝ “The Staff of Fioletovo’s municipality” CAO:

5. Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

6. Աշխատակազմն անձամբ չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ՝ օրենքով և(կամ) ավագանու սահմանված չափով և կարգով:

7. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ Ֆիոլետովոյի համայնք, առաջին փողոց, 146 շենք, փոստային դասիչ՝ 2042:

8. Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

9. Աշխատակազմի նպատակն ու խնդիրը համայնքի ղեկավարի և ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի (ղեկավարի) մասնակցության ապահովումն է:

10. Ավագանին և համայնքի ղեկավարն Աշխատակազմի միջոցով համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները, համակարգում համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ համայնքային կազմակերպություններ) գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:

11. Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն կրում է համայնքը:

12. Աշխատակազմն իր ֆինանսական գործառություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

I. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

14. Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում՝ անձանք և իր տեղակալների միջոցով, որոնք գործում են համայնքի ղեկավարի անունից, համապատասխանաբար համակարգում են և պատասխանատվություն են կրում իրենց համակարգման ոլորտում գործող աշխատանքների արդյունավետ կազմակերպման և անհրաժեշտ արդյունքների ապահովման համար:

15. Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է Աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

16. Համայնքի ղեկավարը՝

1) իրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով,

2) ավագանու հաստատմանն է ներկայացնում որոշումների նախագծեր՝

ա. համայնքի զարգացման հնգամյա ծրագրի վերաբերյալ,

բ. Աշխատակազմի համայնքային կազմակերպությունների կանոնադրությունները,

գ. Աշխատակազմի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ,

դ. Համայնքային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ,

ե. համայնքային կազմակերպությունների ղեկավարների նշանակման և ազատման վերաբերյալ: Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում՝ առանց համաձայնեցնելու ավագանու հետ,

զ. տեղական հանրաքվե նշանակելու վերաբերյալ,

է. համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ,

ը. համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ,

թ. համայնքի սեփականություն համարվող գույքի օտարման կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ,

ժ. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ,

ի. համայնքի՝ անվանման և վերանվանման ենթակա փոփոխումների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային կազմակերպությունների վերաբերյալ,

3) իր որոշմամբ հաստատում է համայնքային կազմակերպությունների տնօրենների կողմից ներկայացված՝ իրենց կազմակերպությունների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,

4) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ,

5) օրենքով նախատեսված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում է դասային աստիճաններից,

6) նշանակում և ազատում է Աշխատակազմի քարտուղարին

7) պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարի տեղակալին.

8) համայնքի ղեկավարի բացակայության դեպքում որոշում է տեղակալի վրա համայնքի ղեկավարի պարտականությունները դնելու հարցը,

9) հաստատում է Աշխատակազմի գործավարության կարգը,

10) սահմանում է Աշխատակազմի լիազորությունները և գործառույթները,

11) իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ,

12) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը,

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

17. Համայնքի ղեկավարի տեղակալը՝

1) համակարգում է Աշխատակազմի համայնքային կազմակերպությունների աշխատանքները՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում,

2) Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմի համայնքային կազմակերպություններին համայնքի ղեկավարի կողմից տրվող կոնկրետ հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողություն, խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով Աշխատակազմի համայնքային կազմակերպություններին, համայնքային ծառայողներին տալիս է գրավոր և բանավոր հանձնարարականներ և իրականացնում է դրանց կատարման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն,

3) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ և(կամ) իր նախաձեռնությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ,

4) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում, ինչպես նաև համայնքային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը,

5) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ,

6) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները,

7) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին,

8) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին,

9) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

18. Համայնքի ղեկավարի տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

19. Ավագանին՝

1) օրենքով սահմանված հարցերով վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ,

2) որոշում է Աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը,

3) հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և

աշխատակիցների թվաքանակը,

4) սահմանում է համայնքի ղեկավարի, Աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը,

5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է համայնքի ղեկավարի տեղակալին,

6) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին,

7) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը,

8) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը,

9) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, սահմանում և (կամ) հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները,

10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

23. Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Աշխատակազմի քարտուղարը՝ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, Աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, մասնավորապես՝

1) ապահովում է ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը,

2) կազմակերպում և ապահովում է Աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը,

3) ապահովում է Աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը,

4) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը,

5) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը,

6) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ,

7) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում ի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև ավագանու ընդունած՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին

որոշմամբ.

8) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև Աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.

9) ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում,

10) օրենքով, իրավական այլ ակտերով կամ Աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում նշանակում և ազատում է Աշխատակազմի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

11) օրենքով, իրավական այլ ակտերով և Աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում ի հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ,

12) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և Աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13) Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման աննարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

25. Աշխատակազմի գլխավոր ֆինանսիստն Աշխատակազմի առաջատար մասնագետն է:

26. Ֆինանսիստը՝

1) ղեկավարում է Աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է համայնքի ղեկավարի անմիջական հանձնարարականներով և իրականացում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով իր վրա դրված լիազորությունները

2) իր իրավասությունների սահմաններում պատասխանատու է համայնքի բյուջեի նախագծի կազմման, Աշխատակազմի ֆինանսական (բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

II. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

27. Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, որն Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում է (ամրացվում է) ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:

28. Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

III. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ?

29. Աշխատակազմը, ինչպես նաև համայնքային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

IV. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

30. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

31. Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել ստուգման, աուդիտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

32. Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 06

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 03.01.2025 թ. 01/107.4.1/10854-24 գրությունը՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԲԼՈՒԽԻՆՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՆՈՎԻԿՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ ԱԼԵՔՍԵՅ

ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ ՄԻԽԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱԼԵՔՍԵՅ ԶԻԶՅՈՎ